ՁՈՐՈՒՏ–ԻՇԽԱՆԱՎԱՆՔ. ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Զորուտի վանք-մենաստանը գտնվում է Հրազդանի շրջանի Արզական գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևելք, ճանապարհի աջ կողմում, անտառախիտ սարալանջի վրա[1]։ Մինչև 1969 թ. հողի մակերեսին երևում էին մի քանի կառույցների անորոշ ավերակներ, բազմաթիվ խաչքարեր (ամբողջական և կոտրված), պատվանդաններ։ Հիմնական շինություններից մոտ 200 մ հեռավորության վրա (դեպի հարավ) գտնվում է վանքի գերեզմանոցը։

1969—1970 թթ. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչության կողմից տեղում կատարված մաքրման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվեցին խոշոր համակառույցի ավերված մնացորդները, որոնք իրենց ճարտարապետական հորինվածքով, զարդաքանդակների հարստությամբ և հարդարման տեխնիկայով վկայում են, որ այստեղ մեր ծաղկուն միջնադարում գոյություն է ունեցել մի նշանավոր կրոնամշակութային օջախ՝ ներառնված ճարտարապետական ուշագրավ համակառույցի մեջ։

Հնավայրը տեղագրական ուսումնասիրություններում հիշատակված է Զորուտի վանք անունով։ Հ. Շահխաթունյանցը, խոսելով Արզական գյուղի շրջակայքի գյուղատեղերի և հնավայրերի մասին, գրում է. «Յարևելից հիւսիսոյ ներքին Տէլիլէր (Դալիլար—Գ. Ս.) դեղջէ ծործոր ինչ, զոր անուանեն Զորուտ ...Եկեղեցի մենաստանին մեծ մասամբ կործանեալ է և գուցէ յերկրաշարժութենէ և կայ կանգուն միայն որմն հիւսիսային»[2]։ Այնուհետև հեղինակը ներկայացնում է այդ պատին փորագրված երեք արձանագրությունները։ Ղ. Ալիշանը, անդրադառնալով Աղվերան գյուղի մերձակայքի մի շարք գյուղատեղերի՝ Լեյլի խարապա, Մուրշոսզ, նշում է, որ «մերձ ի սոսա և Զորուտ (հեղինակը նկատի ունի այդ անունով գյուղը—Գ. Ս.), ի խորաձոր լեռնամիջի, յորոյ հարաւային լանջս ի գիտակ վայրի՝ կայ աւերակ վանաց, ի միջի պտղատու և անպտուղ ծառոց, զորս արբուցանէ վտակ ականակիտ իջեալ ի բարձանց։ Յեկեղեցւոջն կործանելոյ, միջակ մեծութեամբ և երկու մատրամբք առ սեղանովն, յորմն հիւսիսային՝ որ միայն կանգուն կայ, ի ներքուստ գրեալ կան արձանք»[3]։ Այնուհետև Ալիշանը մեջբերում է վերոհիշյալ երեք արձանագրությունները։ Նշանավոր հայագետը փորձում է տեղորոշել Զորուտը։ Նա անհավանական չի համարում Հ. Շահխաթունյանցի կարծիքը, որով Զորուտը նույնացվում է Կիրակոս Գանձակեցու հիշատակած Ղորաձոր (իրականում Զորաձոր) բնակավայրի հետ, որը գտնվել է Բջնիի մերձակայքում և Զաքարյանների կողմից նվիրաբերվել էր Նոր Գետիկի վանքին[4]։ Զորուտի վանքը և այդ երեք վիմագրերը հիշատակում է նաև Մ. Սմբատյանցը[5]։ Վանքի այս անվան վերաբերյալ սկզբնաղբյուրներում հիշատակություններ չեն պահպանվել, որը, կարծում ենք, վկայում է նրա ուշ ծագման մասին։ Մեր նախորդ մի աշխատության մեջ քննության

---

1 Հուշարձանախումբը մտնում է նախկին կոմունալ տնտեսության նախարարության հանգստյան տան տարածքի մեջ։

2 Յովանէս Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 177—178։

3 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 257։

4 Նույն տեղում, էջ 258։

5 Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 314—315։

առնելով Թեղենյաց վանքի գավթի շինարարությանն օժանդակող Վահրամ Զավուշի գործունեությունը, անդրադարձել էինք նաև Բջնիի ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ քարի վրա նույն Վահրամի թողած մեկ այլ վկայագրին, որից պարզվում էր, որ Իշխանը Բջնիի եկեղեցին սարարկելուց զատ, կառուցել է նաև Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցին[6]։ Մեր հետագա պրպտումները ցույց տվեցին, որ այդ փաստը անմիջականորեն առնչվում է ներկա քննության առարկային։

Ջորուտի հնավայրի մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել էին տասնյակ արձանագրված շինաքարեր, որոնց մանրազնին քննությունն ու համադրումը ցույց տվեցին, որ դրանց մեծ մասը պատկանում է վիմագիր երկու վկայագրերի, որոնք կարևորագույն աղբյուր են վանքի պատմության մի շարք հարցերի լուսաբանման համար։

Արձանագրություններից մեկը բավական ընդարձակ մի վկայագիր է՝ զետեղված 15 քարերի վրա, բաղկացած է 4 տողից։ Տողերն ընդգրկում են երկու քարաշար։ Քանի որ արձանագրության ոչ բոլոր քարերն են գտնվել, ուստի վերծանության որոշ հատվածներ պայմանական են։

ԱՌԱՋԻՆ ՏՈՂ

I քար. սկզբի 2—3 տառերը կոտրված են, որտեղ կարող էր փորագրված լինել ԿԱՄԱՒԻՆ բառը (փակագրով)։ Այնուհետև պարզորոշ վերծանվում է՝ ԱՅ ԵՍ ՎԱՀՐԱՄ ՁԱՒՈ։

II քար. վիմագրի համապատասխան հատվածն ամբողջովին վերծանվում է. ԻՇԽ ՇԻՆԵՑԻ ՁՍ։ Տողի վերջում փորագրված է Ս տառի ձախ ուղղահայաց ստեղնը՝ ներքևի կորի սկզբնամասով, իսկ վերևում երևում է «պատիվ» նշանի կեսը։

III քար. բոլոր տառերը, բացի վերջին երեքից, պարզ վերծանվում են. Բ ԱԾԱՇԻՆՍ ԵԻ ԵՏՈ։ Ե, Տ, Ո տառերի ստորին հատվածները կոտրված են, սակայն հեշտությամբ վերականգնվում են։

Այս հատվածում, արձանագրությունը շարունակող քարը պակասում է, որի սկզբում փորագրված է եղել Ի տառը։ Դժվար է ճիշտ որոշել, թե այստեղ քանի քար է պակասում, սակայն, դատելով հաջորդ պահպանված հատվածի բովանդակությունից՝ երկուսից ոչ ավելի։

IV քար. այստեղ հավաստի վերծանվում է՝ Ի ՁԱԳ ՁԳՈՇ։ Կարծում ենք, որ Ձագը Կոտայք գավառի համանուն գյուղն է, որտեղից, ըստ երևույթին, Գոճոնց ընտանիքին պատկանող մի հողակտոր կամ այգի է ընծայվել։ ԳՈՃՈՆՑ-ը վերականգնված է պայմանականորեն։

Այստեղ նույնպես պակասում են մեկ կամ մի քանի քարեր, սակայն կարող ենք վստահորեն նշել, որ այս հատվածի վերջին չպահպանված քարի վրա փորագրված է եղել ՊԱՐՈՆԱ բառը։

V քար. առաջին տառը Ց է, որով ամբողջանում է նախորդ՝ ՊԱՐՈՆԱՑ բառը։ Մնացածը լիովին վերծանվում է. ՄԵՐՈՑ ՁԱՔԱՐ։

VI քար. անմիջապես կցվում է նախորդին, որտեղ կարդում ենք. ԷԻ ԵԻ ԻԻԱՆԷԻ ԵԻ Կ։ Կ-ից հետո երկու տառ եղծված են, երևում են երկուական ուղղահայաց ստեղների վերնամասերը։ Երկրորդի աջ ստեղնի վերևում ուրվագծվում է Մ-ի փոքր հորիզոնական ստեղնիկը։ Նշված տառերը կարելի է վերականգնել որպես Ա, Մ ու ԵԻ-ից հետո կարդալ ԿԱՄ։ Ամենայն հավանականությամբ, հաջորդ քարի վրա պետք է ամբողջանար ԿԱՄԱԿՅՈՒԹԵԱՄԲ բառը։ Եթե ընդունենք այս վարկածի հավանականությունը, ապա կարող ենք նշել, որ որանից հետո հիշված է եղել կամ վանքի, կամ թեմի առաջնորդի անունը։ Նման դեպքերում նշվում է պատրոնը կամ հոգևոր առաջնորդը։

Այսքանով ավարտվում է արձանագրության առաջին տողի պահպանված հատվածը։

---

6 Գ. Գ. Սարգսյան, Արձանագրություն Թեղենյաց վանքից (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, № 8, էջ 100)։


I ԵՎ II ՏՈՂԵՐ
I
II
III
IV
V
VI

ԵՐԿՐՈՐԴ ՏՈՂ

I քար. սկզբի երկու կամ երեք տառերը կոտրված են, այնուհետև պարզ վերծանվում է Ո տառը, որից հետո կոտրված են ևս վեց տառեր։ Վերջին-ներիս հաջորդում է լիարժեք վերծանվող ՀԱԼԱԼ Ը հատվածը։ Վերջին Ը-ն, անտարակույս, ԸՆԶԻՑ (ինչք) բառի սկզբնատառն է։

II քար. քարի վերայի ամբողջ հատվածը վերծանվում է՝ ՆԶԻՑ ԵՒ ԱՅԼ։

III քար. այստեղ, եթե առաջին տողը լավ ընթերցվում է, ապա երկրորդի վերջնամասը՝ 3—4 տառ, կոտրված է, իսկ սկզբում փորագրված է ԱՐԴԻՒՔ բառը։ Գրիչը, հավանաբար, մոռացել է նախավերջին Ն-ն։

IV քար. չի կապվում նախորդ և հաջորդ քարերի հետ։ Այստեղ պահպանվել են ինչ-որ բառի ԱՅ վերջավորությունը ու ԵՒ շաղկապը, որից հետո չորս տառ եղծված է, սակայն ուրվագծվում է ՅԱՅ տառակապակցությունը։

V քար. սկզբում կարդացվում են ՄՆ տառերը, այնուհետև՝ ԵՒ ՁՇԱԽՍ բառերը։ Վերջին Ս-ից ուրվագծվում են միայն երկու ուղղահայաց ստեղների վերնամասերը։

VI քար. սա անմիջական շարունակությունն է նախորդի։ Այստեղ պարզորոշ վերծանվում է Ի ՇԻՆՈՒԹԻ բառը։ Մնացած հատվածը (5—6 տառ) կոտրված է։

Դատելով վերջին երկու քարերի վրա ընթերցվող ՁՇԱԽՍ Ի ՇԻՆՈՒԹԻ հատվածից, ենթադրում ենք, որ Վահրամը ոչ միայն կառուցել է տեղի Աստվածածին եկեղեցին, այլև հոգացել է մեկ այլ կառույցի շինարարության ծախքերը։

Երրորդ և չորրորդ տողերի պահպանվածության վիճակն ավելի բարվոք է։ Այստեղ, ամենայն հավանականությամբ, պակասում են երկու քար՝ սկզբինը և նախավերջինը։

ԵՐՐՈՐԴ ՏՈՂ

I քար. հեշտությամբ վերծանվում է. ՁՆՈՐԴՔ ՍԲ։ Անշուշտ, սրա նախորդ, չպահպանված, քարի վրա փորագրված են եղել ԱՌԱՋՆՈՐԴՔ բառի առաջին երեք տառերը։ Դ և Ք տառերի վերին կորերը կոտրված են։

II քար. ընթերցվում են ՈՒԽՏԻՍ ՀԱՍՏԱՏԵՑ բառերը։ Երկրորդ բառի ԻՆ վերջավորությունը փորագրված է հաջորդ քարի վրա։

III քար. սկզբում փորագրված է ԻՆ ՄԵԶ, այնուհետև կոտրված է երկու տառ, որոնցից առաջինը պատարագների քանակը ցույց տվող թվատառն է, իսկ երկրորդը, դատելով հաջորդ քարի վերծանվող ԱՄ տառերից՝ Ժ է։

IV քար. ԱՄ ՁՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ ՁՏ։ Սկզբի ԱՄՁ տառերի հատվածը փորագրված է առանձին կոտրված բեկորի վրա։

V քար. տառերը լրիվ վերծանվում են. ԱՐԻՆ ՈՂՋՈՅՆ։

VI քար. երրորդ տողի այս հատվածը ամբողջովին կոտրված է, մեջտեղում միայն ուրվագծվում է Ա տառը։

VII քար. տողի սկզբում նշմարվում է Ա տառի փոքր ստեղնը, իսկ այնուհետև՝ ԾԱԾՆԵՆ, վերջում Մ տառի առաջին ուղղահայաց ստեղնը՝ ներքևի կիսակլորի մի մասի հետ։ Սկզբի Ծ տառի վրա պահպանվել է «պատիվ» նշանը, ուստի կարող ենք վստահորեն այս բառը վերծանել որպես ԱԾԱԾՆԵՆ։

VIII քար. սկզբում փորագրված է Մ տառի վերին փոքր հորիզոնական ստեղնը, իսկ հետո՝ ԻՆՁԵԻ Ի ՀԱ, այնուհետև երկու տառ կոտրված են։

Երրորդ տողի պահպանված հատվածն այսքանով ավարտվում է, թերևս այստեղ պակասում է մեկ կամ երկու քար։

ՉՈՐՐՈՐԴ ՏՈՂ

I քար. պահպանվել է ՄԲԱՐՁՄԱՆ տառակապակցությունը։ Նախորդ տողի վերջին ՀԱ տառերով ամբողջանում է (գումարած նաև հաջորդ քարի սկզբի ԵՆ տառերը) ՀԱՄԲԱՐՁՄԱՆԵՆ բառը, որը նույնանուն տոնի անվանումն է։


III-ԵՎ IV ՏՈՂԵՐ
I
II
III
IV
V
VI
VII
VIII
IX



I



II



III



IV



V

VI

II քար. ԵՆ ՄԻՋԵՒ ԱԾԱԾԻՆ ՈՐ։ Առաջին և երկրորդ քարերի վրա փորագրված հատվածից կարելի է հասկանալ, որ պատարագները պետք է մատուցվեին Համբարձման և Աստվածածնի տոների միջև ընկած ժամանակահատվածում։

III քար. սկզբի ԴՈ տառերով ամբողջանում է ՈՐԴՈՅ բառը, որին հաջորդում է ԻՄՈ-Ն։ Վերջում կոտրված է մեկ կամ երկու տառ։

IV քար. սկիզբը կոտրված է։ Ուրվագծվում է Ս տառը և Ա-ի առաջին ուղղահայաց ստեղնի վերին մասը։ Հիմնական քարի սկզբում պարզ երևվում է Ա-ի ստորին աջ անկյունը՝ փոքր ստեղնով։ Սրան հաջորդում են Ն, Ի, Ն տառերը։ Մեր կարծիքով, այստեղ կարելի է վերականգնել ՀԱՍԱՆԻՆ անձնանունը։ Այնուհետև փորագրված է ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱ հատվածը։

V քար. սա անմիջապես նախորդի շարունակությունն է. ՄԱՆԱՅՍ ԱԻՀՆ։

VI քար. սկզբում կոտրված է մեկ կամ երկու տառ, որոնցով, անկասկած, կամբողջանար ԱԻՀՆԻՆ բառը։ Այնուհետև կարդում ենք. ՅԱՅ ԵԹԷ ՈՔ։

VII քար. այստեղ զետեղված է ԽԱՓԱՆԷ բառը, իսկ վերջում՝ զույգ (։) կետեր։

VIII քար. սկզբում երևում են երեք տառերի վերնամասերը և նորից զույգ կետեր. նկատի ունենալով սրանց հաջորդող ՀԱՅՐԱՊԵ բառամասը, սկզբում վերականգնում ենք՝ ։ՅԺԸ։(316)։

Հաջորդ քարի վրա պետք է փորագրված լիներ ՏԱՅ վերջավորությունը, որով և կամբողջանար ։ՅԺԸ։ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ։ հատվածը։

IX քար. փորագրված է ԱՆԷ (խափանե) ԴԱՏԻ ՏԷ, որով ավարտվել է արձանագրությունը։

[ԿԱՄԱԻՆ] ԱՅ, ԵՍ ՎԱՀՐԱՄ ՁԱՒՈՒՇՍ, ՇԻՆԵՑԻ ՁՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԵՒ ԵՏՈՒ ... Ի ՁԱԳ ՁԳՈՃ... [ՊԱՐՈՆԱ]Յ ՄԵՐՈՅ ՁԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷ[Ի] ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԲ... (Ո ... ՀԱՒԱՒ ԸՆՁԻՑ ԵՒ ԱՅ[Լ] ԱՐԴԻՒՆՔ ՅՈ... ԱՅ ԵՒ ՅԱՅ... ՄՆ ԵՒ ՁԾԱԽՍ Ի ՇԻՆՈՒԹ[ԵԱՆ] ԵԿԵՂԵՑՈՅՍ /ԵՒ ԱՌԱ]ՁՆՈՐԴՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՍՏԱՏԷՑԻՆ ՄԵՁ. [ԺԱՄ] ՁՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ՁՏԱՐԻՆ ՈՂՋՈՅՆ ...Ա... ԱԾԱԾՆԵՆ ՄԻՋԵՒ Ի ՀԱ/ՄԲԱՐՁՄԱՆԵՆ ՄԻՋԵՒ ԱԾԱԾԻՆ ՈՐԴՈՅ ԻՄՈ [ՀԱՍ]ԱՆԻՆ, ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՅՍ ԱՒՐՀՆ[ԻՆ] ՅԱՅ, ԵԹԵ ՈՔ ԽԱՓԱՆԷ ։ՅԺԸ։ ՀԱՅՐԱՊԵ[ՏԱՅՆ ՆՁՈՎԱԾ է, ԻՍԿ ՈՎ ՈՔ Հ]ԱՆԷ ԴԱՏԻ ՏԷ։

Արձանագրությունը, չնայած խաթարված տողերին, արժեքավոր տեղեկություններ է պարունակում Վահրամ Զավուշի և նրա շինարարական ու նվիրատվական գործունեության մասին։ Վիմագրից պարզվում է, որ Վահրամը տեղում կառուցել է եկեղեցի՝ ս. Աստվածածին անունով, կատարել է նվիրատվություն։ Ամենայն հավանականությամբ, նվիրվել է Կոտայք գավառի Ձագ գյուղից, Գոճոնց ընտանիքին պատկանած կամ նրանցից գնված հողակտոր։

Զաքարեի և Իվանեի հիշատակումը ցույց է տալիս, որ Վահրամը եղել է Զաքարյանների վասալ իշխաններից։ Արձանագրության մեջ ակնարկ կա նաև Վահրամի կողմից մեկ այլ կառույցի շինարարության ծախքերը հոգալու մասին։

Վահրամ Զավուշի թողած արձանագրություններից պարզվում է, որ նա շինարարական գործունեություն է ծավալել մի շարք վայրերում. օգնել է Թեղենյաց վանքի գավթի շինարարությանը (1207 թ.), սալարկել է Բջնիի ս. Աստվածածին եկեղեցին (1209 թ.), կառուցել է Իշխանավանքի նույնանուն եկեղեցին, նաև՝ Ջորուտի ս. Աստվածածինը և, ինչպես վերևում նշվեց, հոգացել է ինչ-որ կառույցի շինարարության ծախքերը։

Եթե Թեղենյանց վանքի, Բջնիի և Զորուտի համապատասխան կառույցների տեղադրությունը քաջ հայտնի է, ապա Իշխանավանքի և վերոհիշյալ անհայտ շինության մասին նույնը չենք կարող ասել։

Քննելով Վահրամի՝ Բջնիի և Զորուտի արձանագրությունները, նկատեցինք դրանց բացահայտ փոխադարձ կապը։ Բջնիի վիմագրում նշված է, որ բացի տեղի եկեղեցու նորոգումից, Վահրամը կառուցել է «զԻշխանավանից մեծ եկեղեցին յանուն սբ. Աստվածնին» (առաջինը հիշատակված է այս գործը, հետո՝ նորոգման փաստը)։ Ինչպես նկատեցինք, Զորուտի եկեղեցին նույնպես Աստվածածին է կոչվում և կառուցվել է նույն Վահրամի կողմից, ուստի, կարծում ենք, բոլոր հիմքերը կան Բջնիի արձանագրության մեջ նշված ս. Աստվածածին (Իշխանավանք) և Զորուտի համանուն եկեղեցիները նույնացնելու, այսինքն՝ Զորուտի վանքը նույն Իշխանավանքն է։

Իշխանավանքի հիշատակությամբ այսօր մեզ հայտնի է երկու վկայություն։ Հովսեփ Դվնեցու կամ Նորաշենցու վկայաբանության մեջ խոսելով Հովսեփի դեգերումների մասին, հեղինակը գրում է. «Եւ ելեալ գաղտագողի գնալ ի գաւառն Մազազայ որ է Բջնի[7], ի վանս Իշխանի, որ է մէջ երկուց լերանց զայս բարձրագունից պարփակեալ անտառախիտ ծառօք, առ այրն ոմն միանձնացեալ՝ որ առաւել փայլէր յաշխարհիս մերում վարիւք, ճգնաւորական հանդիսիւ, քահանայական զարդարեալ, Սարդիս կոչեցեալ, խրատ ի՛մն զտանել ի նմանէ, եթէ որպէս վարեսցէ զկեանս իւր և կամ ուր երթեալ դադարեսցէ»[8]։ Այստեղ ակնհայտ է Իշխանավանքի և Զորուտի վանքի տեղավայրերի նկարագրության խիստ նմանությունը։ Սրան ավելացնենք նաև այն փաստը, որ Զորուտը նույնպես մտնում էր Բջնի դավառի մեջ[9]։

Վերջերս, Զորուտի վանքի ս. Աստվածածին եկեղեցու միակ կանգուն հյուսիսային պատին, արտաքուստ, մեզ հաջողվեց կիսով չափ վերծանել նաև մի եղծված արձանագրություն, որը լիովին հաստատեց մեր կարծիքը։ Այն բաղկացած է 5 տողից, քիչ թե շատ ամբողջանում են առաջին երկու տողերը.

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ ... ՈՐԴԻ ՍԱՐԴՍԻ, ՈՐԴԻՈ ... /ՍԲ ՈՒԽՏԻՍ ԻՇԽԱՆԱՅ-ՎԱՆԱՅ ՍԲ .../.... ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱ/.... ԱՌԱՋՆՈՐԴՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ .../...։

Չնայած արձանագրությունը գրեթե ամբողջովին խաթարված է, այնուհանդերձ, այն պարունակում է մի կարևոր փաստ։ Դա Իշխանավանք անունն է։ Այս վանքը հիշատակված է նաև XIII դ. 60—70-ական թվականներին Դավիթ գրչի ձեռքով ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում, համաձայն որի ձեռագրի մի մասը գրվել է «ի հռչակաւոր վանս Իշխանի վանք և աւարտեցաւ ի սուրբ յանապատիս Թեղենեայց կոչեցեալ»[10]։

Հովսեփ Դվնեցին Իշխանավանք է այցելել 1167 թ.[11]։ Այստեղ նրան ընդունել է Սարդիս քահանան, որն, ըստ վկայաբանության հեղինակի, Հայաստանի երևելի հոգևոր գործիչներից է եղել։ Ամենայն հավանականությամբ, դա Սարգիսն է (արդեն որպես վարդապետ)՝ հիշատակված Զորուտ-Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին (ներսից) փորագրված շինարարական-նվիրատվական արձանագրության մեջ։ Այն բաղկացած է տարբեր երկարության 9 տողից և հիմնականում լավ է պահպանվել. միայն 6—7-րդ տողերում կան եղծված հատվածներ.

7 Վկայաբանության հեղինակը սխալմամբ նույնացրել է Մազազ և Բջնի գավառները։

8 Հայոց Նոր վկաները, կազմեցին Հ. Մանանդյանը և Հր. Աճառյանը, Վաղարշապատ, 1903, էջ 50։

9 Բջնին և նրա շրջակայքը երբեմն հիշվում են որպես Բջնի գավառ։

10 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյանը, Երևան, 1984, էջ 890։

11 Այդ թվականին Հովսեփի այցը Իշխանավանք վկայում է, որ մինչև Վահրամի կողմից եկեղեցի կառուցելը, տեղում եղել է վանական միաբանություն։



I



II



III



IV



V



VI



VII



VIII



IX

Ի ԹՎԻՍ ՈՄԶ (1207)/, ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ ՄԵՂ/ԱՒՈՐ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱ-ՊԵՏ, ՈՐ ԱՌԱՋՆՈՐ/Դ ԵՂԷ ՈՒ ՇԻՆԵՑԻ ՋՍԲ ԱՄԱ/ՄԻՆՍ ԵՒ ԷՏՈՒ ՁԴՐԱՄ ԱՅԳԻՆ ԵՒ ՀՆՁԱՆ Ի ՇԷՆԳԱՒԻԹ ԵՒ ՅԷՐԵՒ/ԱՆ, ՁԻՄ ԲԱԺԻՆ ԱՅԳԻՆ Ի ՁԻ-ԹԷՆԻՆՍ/ ...ՁԻՄ ԲԱԺԻՆՆ, /ՀԱՅՐՍ ԵՒ ԵՂԲԱՐԳՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ/Ն Ի ՏԱՐԻՆ ԺԱՒՐ ԺԱՄ, ՈՐ ԽԱՓԱՆԷ ՆՁՈՎԵԱԼ ԼԻՆԻ[12]

Համաձայն արձանագրության, վանքի առաջնորդ Սարգիս վարդապետը կառուցել է տեղի ս. Աստվածածին եկեղեցին, նվիրել այգիներ և հնձան։ Արդ, ինչպես հասկանալ այն փաստը, որ և՛ Վահրամը, և՛ Սարգիս վարդապետը իրենց համարում են ս. Աստվածածին եկեղեցու կառուցող։ Նման փաստ հայ վիմագրության մեջ մեզ չի հանդիպել։ Քիչ չեն շինարարական վկայագրերը, որոնցում միասին հիշատակված են երկու և ավելի մեկենասներ, բայց որ երկու տարբեր վիմագրերում, միևնույն շինության մասին նշվեն տարբեր կառուցողներ՝ եզակի երևույթ է։ Շահխաթունյանցը, ներկայացնելով Սարգիս վարդապետի արձանագրությունը, նշում է, որ «շինեցի» այստեղ «ոչ նշանակէ զայն ի հիմանէ, այլ զնորոգութիւն ինչ»[13]։ Ի՞նչ է նկատի ունեցել արժանահիշատակ տեղագիրը, հայտնելով այս կարծիքը. չէ՞ որ նա ծանոթ չէր ոչ Վահրամ Զավուշի՝ Բշնիի և Իշխանավանքի արձանագրություններին, ոչ էլ Հովսեփ Դվնեցու վկայաբանության վերոհիշյալ հատվածին և հիմք չուներ եկեղեցին նորոգելու փաստը վերագրելու Սարգիս վարդապետին։

Արձանագրություններում, անշուշտ, հանդիպում են դեպքեր, երբ «շինեցի» բառով արտահայտվել է նորոգման փաստը, սակայն մեր օրինակում այն պետք է մեկնել իր ուղղակի իմաստով, քանի որ Վահրամի արձանագրությունը, չնայած թվագրված չէ (կամ չի պահպանվել), այդուհանդերձ փորագրվել է գրեթե նույն ժամանակ, ինչ որ Սարգսինը։ Չնայած այս երևույթի արտասովորությանը, զուրգ արձանագրություններն էլ պետք է դիտել Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը փաստող վկայագրեր։

Վահրամ Զավուշի՝ Իշխանավանքի արձանագրության մեջ նշված է մեկ այլ շինության կառուցման ծախքերը հոգալու մասին. «...ԵՒ ՁԾԱԽՍ Ի ՇԻՆՈՒԹԻՒ ԵԿԵՂԵՑՈՅՍ»։ Ինչպես վերևում հիշվեց, Վահրամը իր միջոցներով օժանդակել է Թեղենյաց վանքի գավթի շինարարությանը և, կարծում ենք, հենց այս փաստն է նկատի ունեցված Իշխանավանքի վիմագրում։ Առաջ քաշված այս վարկածի օգնությամբ կարող ենք առավել ճշտել Իշխանավանքի արձանագրության թվականը։

Բշնիի արձանագրության մեջ (1209 թ.) խոսվում է Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցու արդեն ավարտված շինարարության մասին, իսկ Իշխանավանքի վիմագրում նշված է Թեղենյաց վանքի գավթի շինարարությանն օժանդակելու փաստը (1207 թ.) (համաձայն մեր վարկածի), ուստի ակներև է, որ Վահրամ Զավուշի՝ Իշխանավանքի արձանագրությունը փորագրվել է 1207 թ. վերջերին կամ 1208 թվականին։

Վահրամ Զավուշի և Սարգիս վարդապետի վերոհիշյալ արձանագրություններով չի սահմանափակվում Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցու շինարարական վկայագրերի թիվը։ Նույն եկեղեցու մուտքի ճակատաքարը եզերող կամարի քարերի վրա փորագրված է շինարարական ևս մի արձանագրություն։ Սկզբնապես այն ուսումնասիրված է եղել չորս քարերի վրա, որոնցից պահպանվել են երեքը։ Արձանագրությունը բաղկացած է երկու տողից և հեշտությամբ վերծանվում է.

---

12 Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 179, Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 315։

13 Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 179։

Ի ԹՎԻՍ ՈԾ(1201), ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՍ ԶԱՔԱՐԷ ՍՊԱՐԱՊԵՏ ԱՒԳՆԱԿԱՆ ԵՂԷ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՔ/ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ· ԻՆՁ Ի ՏԱՐԻՆ ԺԱՄ ՁԱԾԱՑԻՆ ՏԱՆՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ[14],

Արձանագրությունը մեծ արժեք է ներկայացնում նախ Զաքարե ամիրսպասալարի անվան առկայությամբ, որն այստեղ հորջորջված է «սպարապետ» տիտղոսով։ Ճիշտ է, բնագրում չի նշված շինարարությանն օժանդակելու փաստը, սակայն վիմագրական բազմաթիվ նմանօրինակ հիշատակություններ վկայում են, որ արտահայտման այդ ձևով նշվում էր շինարարական աշխատանքներին դրամով մասնակցությունն ունենալը։ Զաքարեի արձանագրությունը թվագրված է 1201 թ., իսկ ինչպես վերևում տեսանք, բուն շինարարական վկայագրերը փորագրվել են 1207 և 1208 թթ.։ Տարեթվերի այս տարբերությունը կարելի է բացատրել մի հանգամանքով. Սարգսի և Վահրամի վիմագրերը փորագրվել են շինարարությունն ավարտելու կապակցությամբ, իսկ Զաքարեինը՝ ընթացքում, երբ արդեն կառուցվել էր մուտքը իր ճակատային հատվածով։

Իշխանավանքի ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ պահպանվել են ևս երկու արձանագրություն, որոնք իրենց բնույթով նվիրատվական են։

XIII դ. առաջին կեսով է թվագրվում Մեսրոպ երեցի արձանագրությունը։ Վիմագրի մի քանի քարեր ընկած են, սակայն XIX դ. կեսերին տեքստն ամբողջական է եղել։ Արձանագրությունը բաղկացած է հինգ տարբեր երկարության տողերից, վերականգնումները կատարված են ըստ Հ. Շահխաթունյանցի հրատարակության.

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՄԵՍՐՈԲ ԵՐԷՑ ԳՆԵՑԻ ՇԱՏԼՈՅՍ/ԵՆՑ ԱԶԳՈՅՆ ԶԱՐԵՔՆ ԶԱՆԶՐԵՒԻՆ ԲԱԺԻՆ Ի ,Խ։ Դ/ԱՀԵԿԱՆ, ԵՏՈՒՆ,Բ։ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՐՈՋՆ, ՈՎ ԽԱՓԱՆԷ ԻՄ ՄԵՂԱՅՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է։ ԱՄ/ՈՂՈՐՄԵԱ ՄԵՍՐՈԲԻՆ[15],

Մեսրոպ երեցը 40 դահեկանով գնել է Շատլույսենց ընտանիքին պատկանող այգու չորրորդ մասը և նվիրել վանքին։ «ԶԱՆԶՐԵՒԻՆ ԲԱԺԻՆ» բառակապակցությունը կարող է մեկնվել երկկերպ. առաջին բառը անձնանուն է և, որ այգու նվիրված մասի տերը հենց Անձրևն է։ Անձրև բառը որպես անձնանուն այլուստ հայտնի չէ։ Մեսրոպը, ամենայն հավանականությամբ, Իշխանավանքի միաբաններից է։ Շահխաթունյանցի մոտ դահեկանների թիվը նշված է Ո(1000), սակայն այն, թեկուզ մոտավոր, չի համապատասխանում հատկացված պատարագների արժեքին։ Ուստի, մեր հաստատ համոզմամբ, տեղագիրը սխալ է վերծանել այդ թիվը. պետք է լիներ Խ (40) կամ Ծ (50)։

Անմիջապես Մեսրոպի արձանագրության տակ փորագրված է մյուս վիմագիրը։ Այն բաղկացած է վեց տողից, առաջին երեք տողերում կան հողմահարված հատվածներ.

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՔԱՀԱՆԱՊԵՏՍ ԵՒ / ԴԱՍԱՊԵՏՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ .../ ... ԵՒ ԶԱՇՏԱՐԱԿՈՒ ԱՅԳԻՆ ԴՐԱՔ ԵՒ ԱՅԼ ԻՆՁՍ ՏՎԱՔ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Հ/ ԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ ,Բ։ ՊԱՏԱՐԱԳ ՄԵՋ[16],

Հողմահարված հատվածները հնարավորություն չեն ընձեռում լիովին պարզելու նվիրատուների նպատակը, խոսվում է Աշտարակում այգի հիմնելու, հնձան կառուցելու և «այլ ինչս» տալու (նվիրելու) մասին։ Կարծում ենք, որ Քահանայապետը և Դասապետը այդ այգին, հնձանը այլ ինչքերի հետ նվիրել են վանքին։ Ուշագրավ են նշված անձնանունները։ Հ. Շահխաթունյանցը ԶԱՇՏԱՐԱԿՈՒ-Ն վերծանել է ԱՇՏԱՐԱԿԱՅ, իսկ վերջում նշել թվականը՝ ՈԾԶ (1207), որը, ինչպես վերևում ասվեց, վերաբե-

14 Հրապարակվում է առաջին անգամ։

15 Հ. Շահխաթունեան ց, նշվ. աշխ., էջ 179. Մ. Սմբատեան ց, նշվ. աշխ., էջ 314։

16 Նույն տեղում։

րում է հաջորդ՝ Սարգիս վարդապետի արձանագրությանը։ Չնայած այս հանգամանքին, Քահանայապետի և Դասապետի արձանագրությունը փորագրվել է գրեթե նույն ժամանակ, քանի որ, դատելով տառաձևերից, երկուսն էլ նույն գրչի գործն են։

Ջորուտ-Իշխանավանքի վիմագրությունն առավել ամբողջացնելու նպատակով ներկայացնենք ևս մի քանի արձանագրություններ, որոնք առաջին անգամ են մտցվում գիտական շրջանառության մեջ։

Համակառույցի հիմնական շինություններից մոտ 200 մ հարավ, ծառերի մեջ, գտնվում է վանքի գերեզմանոցը։ Այստեղ կանգուն կամ ընկած վիճակում կան բազմաթիվ խաչքարեր, տապանաքարեր և խաչքարերի պատվանդաններ, որոնցից մի քանիսի վրա պահպանվել են արձանագրություններ.

1. Խաչքարի պատվանդան, 3 տող.

Ի ԹՎԻՆ ,ՈՀԲ, (1223), ԵՍ ՄԽԻԹԱՐ ԿԱՆԳՆԷՑԻ Խ/ԱՉԵՐՍ Ի ՓՐԿՈՒԹԵԱՆ ՍՆՈՂԱՑ ԻՄՈՑ / ԵՒ ԵՂԲԱՒՐՆ ԻՄ ՄԽԻԹԱՐՋԻՆ։ ՈՐ ԿԱՐԴԱՑՔ ՅԻՇԷՑԷՔ։

2. Վերոնշյալ պատվանդանի մեջ ագուցված խաչքարի աջ կողին, 8 տող.

ՏՐ ԱՅ /ՈՂՈՐՄԵ/ԱՅ ՄԽԻԹ/ԱՐ ՔԱՀԱՆ/ԱՅԻ ԵՒ ՄԵ/ՂԱՊԱՐՏ /ԵՂԻԱ/Ի։

3. Խաչքար, ստորին մասում, 4 տող.

ՈԿԲ /1219/ ԹՎԻՆ /ԵՍ ՍԱՐԿԱՒԱԳՍ ԵՒ ԳԵՂ/ԷՑԵԿՍ ՈՐ ԿԱՆԿՆԷՑԱՔ/ ՁԽԱՉԵՐՍ Ի ՓՐԿՈՒԹԵԱՆ /ՄԱՒՐՆ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՒՐՆ ԻՄ։

4. Խաչքարի պատվանդան, քառերը փորագրված են չորս խաչանշանների անկյուններում.

ՅՍ ՔՍ ՈՐԴԻ ԱՅ/ՈՂՈՐՄԵԱՅ ՄԱԹԷՈՍԻ, ԳՐԻԳՈՐԻ, /ՅՈՀԱՆԻՍԻ։

Այսքանով չի սահմանափակվում Ջորուտ-Իշխանավանքի արձանագրությունների թիվը։ Պահպանվել են բազմաթիվ քարագիր հիշատակությունների մնացորդներ, որոնք տեղ կգտնեն «Դիվան հայ վիմագրության» համապատասխան հատորում։

ЧОРУТ-ИШХАНАВАНК: НОВОНАЙДЕННЫЕ ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ

Г. Г. САРКИСЯН

Резюме

Развалины монастыря Чорут расположены в лесистой местности, в 5 км к северо-востоку от села Арзакан Разданского района Армении. В результате раскопок были обнаружены фрагменты нескольких эпиграфических надписей.

В первой надписи говорится о постройке Ваграмом Чавушем церкви св. Богородицы и о пожертвованиях.

Надпись на портале церкви св. Богородицы в селе Бджни гласит о реставрации бджнийской церкви в 1209 г. и сооружении церкви в в Ишханаванке тем же Ваграмом Чавушем.

Еще одна надпись 1201 г. упоминает спарапета Закарэ, внесшего свой вклад в строительство Чорутской церкви.

Исследование чорутской и бджнийской надписей и других источников доказывает, что Ишханаванк—это тот же Чорутский монастырь.